ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ԼՌ/60-2021 ք.Արտաշատ

„11" 03 2021թ.

### ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով.

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2021 թվականի փետրվար ամսվա ընթացքում հատուկ առաջադրանքներն և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար պարգևատրել մարզպետի խորհրդականներին, օգնականին, մարզպետի տեղակալի օգնականին՝ համաձայն հավելվածի:
2. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող Լ.Խաչատրյանին՝ կատարել վճարում:

Recoverable Signature

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN RAZMIK 2008610616 Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ